ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում փորձագետ ներգրավելու մասին

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի փորձագետ

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1. Նախարարության պաշտոնատար անձանց գործուղումների ընթացքի նախապատրաստման աշխատանքներին մասնակցություն,

2. Շնորհավորական/ցավակցական ուղերձների և հեռագրերի նախապատրաստում,

3. ՀՀ մարզերի և համայնքների՝ այլ երկրների համապատասխան տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն,

4. Նախարարի, փոխնախարարների մոտ օտարերկրյա պետությունների պատվիրակությունների և օտարերկրյա պետությունների պաշտոնատար անձանց այցելությունների հետ հանդիպման աշխատանքներին մասնակցություն, ինչպես նաև այլ ընթացիկ աշխատանքների իրականացում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ տասնմեկ ամիս ժամկետով:

Փորձագետի պարտականությունները՝

1. Բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1. բարձրագույն կրթություն, առանց աշխատանքային ստաժի.

2. ոլորտը կարգավորող օրենսդրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
3. համակարգչով և ժամանակակից այլ միջոցներով աշխատելու ունակություն.
4. անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
5. ռուսերեն և անգլերեն կամ գերմաներեն կամ ֆրանսերեն լեզուների ազատ տիրապետում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **28.10.2025թ.**

Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-316, 010-511-355:

Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարությունը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ (ներ)),

- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ վկայականի /ների/, աշխատանքային փորձի մասին վկայող փաստաթղթի (հրաման, տեղեկանք, հավաստագիր) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- Համառոտ CV:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, 14:30-ից մինչև 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Էլեկտրոնային հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am :